արիւնալից դէպքերի առաջն առնել և Ազրբէջանի կառավարութիւնը հեռու պահել թիւրք գործակալների գծած ծրագրներից:

Երկար ժամանակից ի վեր նախապատրաստուած յառաջխաղացումը Ղարաբաղի վրա կատարուեց, հայ ազգաբնակութիւնը ահագին զոհեր տուեց ջարդին և միայն տեղական ուժերով կազմակերպուած և սահմանափակ քանակութեամբ զէնքի տէր հայ գիւղացիները ստիպուած էին դիմել ինքնապաշտպանութեան՝ ապահովելու համար իրենց ֆիզիքական գոյութիւնը:

Հայկական կառավարութիւնը այժմ էլ յայտարարում է, որ Ղարաբաղում հայկական կանոնաւոր զօրք չկայ բնաւ: Կանգնած լինելով համաձայնութեան և բոլոր վիճելի հարցերը խաղաղութեամբ լուծելու տեսակէտի վրա, բոլոր զինուած ընդհարումները Հայաստանի Հանրապետութեան և նրա հարևանների քաղաքական ու տնտեսական շահերի համար նկատելով կործանարար՝ յայտարարում է, որ Ազրբէջանի նկատմամբ յարձակողական քայլերի դիմելու մտադիր չէ, ինչպէս որ այդ մասին քանիցս յայտարարել է թէ դաշնակիցներին և թէ խորհրդաժողովի անուն ուղարկած հեռագրներով: Կառավարութիւնը յայտարարում է, որ Հայաստանի զօրքերը Ազրբէջանի սահմանակից հողի վրա դրաւած դիրքերից առաջ չեն շարժուի՝ Ազրբէջանի վրա յարձակուելու նպատակով:

Հայաստանի կառավարութիւնը այս խաղաղասիրութեան հետ միաժամանակ միանգամայն անհրաժեշտ է համարում Ղարաբաղի և Ազրբէջանի կից հողերի հայ ազգաբնակութեան ապահովութեան անհրաժեշտ երաշխիքը Ղարաբաղի, Նուխու, Շամախու, Արէշի, Զաքաթալայի և այլ տեղերում մինչև այժմս էլ Ազրբէջանի սահմաններում ապրող թիւրք փաշաների և սպաների կազմակերպած նման արիւնհեղութիւններին վերջ տալու համար: Այդ երաշխիքները ձեզ հետ միասին կը մշակէ մեր պատգամաւորութիւնը, որ Թիֆլիսումն է»:

Չնայած, որ մենք տիւնք երաշխաւորութիւն, որ Հայաստանի կողմից ոչ մի յարձակում Ազրբէջանի վրա չի կարող լինել, այնուամենայնիւ, Ազրբէջանը իր զօրքերը չտարաւ Ղարաբաղից և չէր էլ կարող տանել, որովհետև ապրիլ 28-ին արդէն յայտարարուած էր խորհրդային իշխանութիւն:

Ապրիլ 30-ին, Ազրբէջանի խորհրդային իշխանութեան կամ ռազմայեղափոխական կոմիտէի ներկայացուցիչներից մէկը՝ Համիդ Սուլթանով հաղորդում է իր մի բարեկամին, թէ կարմիր զօրքը դրաւելով Եւլախը՝ շարժւում է Շուշի, Ղարաբաղի վրայով միանալու Տաճկաստանին և միաժամանակ յայտնում է, որ Վրաստանն իրենց վախ չի ներշնչում, իսկ եթէ Հայաստանը դիմադրութիւն ցոյց տայ, հարկադրուած կը լինեն պատերազմ յայտարարել:

Այս հեռագիրը, որի պատճէնն ունենք մեր ձեռքի տակ, պարզ ցոյց է տալիս Ազրբէջանում տեղի ունեցած դէպքերի իսկական բնոյթը: Կառավարութիւնը հարկ համարեց մի նօտայով դիմել Ազրբէջանի նոր կառավարութեան ներկայացուցիչ Նարիմանովին ու միաժամանակ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Չիչերինին՝ պարզելու թէ ի՞նչ է կատարուում իսկապէս: Ահա այդ նօտան.

«Բագու, ժողկոմխորհի նախագահ Նարիման Նարիմանովին, պատճէն Հայաստանի ներկայացուցիչ Մ. Ցարութիւնեանին. —

Երևան, 29 ապր. — Ինչպէս ձեզ յայտնի է, դեռ Անդրկովկասեան հանրապետութիւնների կազմակերպման սկզբից իսկ Ազրբէջանի նախկին մուսաւաթական կառավարութիւնը քանիցս փորձեց զէնքի ուժով խլել Հայկական Ղարաբաղը և Զանգեզուրը հակառակ գիւղացիական պատգամաւորների 8 համագումարների յայտարարած վճիռների: Նոյն այդ կառավարու-